**Արձանագրություն N 6**
**__ՀԲԿ__ԳԱՊՁԲ_21/0301___ ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Հրազդան 01. ապրիլի 2021թ.

ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Լ.Մարգարյան

Կ.Բագրատյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Նավասարդյան

1. **<u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>**
**(Վ.Հովհաննիսյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Բողոքի վերաբերյալ պարզաբանման ստացման մասին
3. Գնահատման մասին
4. Պայմանագիր կնքելու որոշման մասին

***<u>2. Բողոքի վերաբերյալ հարցման պատասխանի մասին</u>***

**17 .փետրվարի 2021թ. ,,Խաչպար,,ՍՊԸ կողմից ստացվել է դիմում – բողոք 58 -րդ չափաբաժնի վերաբերյալ: Բողոքը վերաբերվում է ,,ՍԴԴ Գրուպ,, ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկին, որտեղ 58-րդ չափաբաժինը ներկայացվել է որպես ԱԱՀ –ով հարկման ենթակա ԲՆԱ: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 67-րդ կետի , հրավերի 8.21 , 8.22 կետերի և հիմք ընդունելով ,, Խաչպար,,ՍՊԸ-ի բողոքը և ՍԴԴ Գրուպ,, ՍՊԸ –ի կողմից ներկայացված պատասխանը, հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերը նշված բողոքի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով: Կցվում է ,,Խաչպար,,ՍՊԸ -դիմում – բողոքը և ,,ՍԴԴ Գրուպ,, ՍՊԸ-ի պատասխանը : ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված դիրքորոշման համաձայն 02/2-3/3170-2021 գրությամբ հարցումը ուղարկվել է ՀՀ ՊԵԿ՝ իրազեկման գործառույթի շրջանակներում ընթացք տալու համար/ կցվում է փաստաթուղթը/: ՀՀ ՊԵԿ-ց ստացված գրության համաձայն ներկայացված հարցադրման հետ կապված հարցի վերաբերյալ անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքի ,,Հաճախ հանդիպող հարցերն ու դրանց վերաբերյալ տրված իրազեկումները,, բաժնումտեղադրված 108-րդ իրազեկմամբ/ կցվում է փաստաթուղթը/: Միաժամանակ ,,ՍԴԴ Գրուպ,,ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 58-րդ չափաբաժնի ՀՀ տարածք**

**ներկրման փաստափուղթը /ԵՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգչի ծածկագիր 4015 11 , կցվում է փաստաթուղթը / և 19.03.2021թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/05 որոշումը, որում նշված է, որ ,,ՍԴԴ Գրուպ,,ՍՊԸ-ի կողմից ,, Ձեռնոց վիրաբուժական ստերիլ 7 7.5,8,, չափաբաժնով գնային առաջարկում ԱԱՀ նախատեսելը չի համարվում ոչ իրավաչափ/ կցվում է փաստաթուղթը /: Հիմք ընդունելով վերը նշված փաստաթղթերը և դրանցում նշված հիմնավորումները, 58-րդ չափաբաժնով հաղթող ճանաչել ,,ՍԴԴ Գրուպ,,ՍՊԸ-ին:**

**6. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին**

**(Վ.Հովհաննիսյան)**

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել ծանուցման օրվան հաջորդող օրվանից հաշված _5__-րդ օրացուցային օրը :

***Ընդունվել է որոշում՝ կողմ -_5___, դեմ – __0__:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ Վ.Հովհաննիսյան

Գնահատող անդամներ՝ Լ.Մարգարյան

Կ.Բագրատյան

Քարտուղար՝ Լ.Նավասարդյան

<<Հրազդանի ԲԿ>>>> ՓԲԸ
N <<ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/0301>> ծածկագրով
մրցույթի

գնահատող հանձնաժողովին

<<Խաչպար>> ՍՊԸ՝

Տնօրեն Սմբատ Բալասանյանից

# ԴԻՄՈՒՄ՝

Հարգելի գործընկերներ:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ս.թ. փետրվարի 16-ին ստացել ենք Ձեր թիվ 2 նիստի արձանագրությունը որում արտացոլված են նաև մասնակիցների գնային առաջարկները:

Ուսումնասիրելով այդ առաջարկները պարզեցինք, որ <<ՍԴԴ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում Հրավերի թիվ 58-րդ չափաբաժնի մասով պահանջվող <<Ձեռնոց վիրաբուժական ստերիլ 7, 7.5, 8>> ապրանքների համար առանձնացված տողով հաշվարկված է ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարի չափը, ինչը հանդիսանում է գնումների գործընթացները կարգավորող՝ տարբեր իրավական ակտերով սահմանված, ՀՀ Օրենսդրական պահանջների խախտումներ հետևյալ հիմնավորումներով՝

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

<< Հոդված Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

1. Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և **իրավական այլ ակտերից:** .....>>, որոնցից սույն դիմումին առընչվում են հետևյալ իրավական ակտերը՝

**Հրավերի թիվ 58-րդ չափաբաժնով պահանջվում են տարբեր չափսերի <<Ձեռնոց վիրաբուժական ստերիլ 7, 7.5, 8>> անվանումներով ապրանքները, որոնք՝**

**ա)** Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի **64-րդ հոդվածի 1-ին մասի՝**

- **ԱԱՀ-ից ազատելը** Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների **հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է,**

**բ)** Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի **64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի՝**

- **ԱԱՀ-ից ազատված գործարքներ են համարվում** դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխ-նիկայի և **բժշկական նշանակության ապրանքների օտարումը**, բժշկական կազմա-

կերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտ պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը:

Նույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը:

գ) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի <<ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 1317-Ն որոշման Հավելված 3-րդին կից <<ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ>>-ի թիվ 32-րդ կետի՝

<< 32. Տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ>>,

անվանումներով ապրանքները ընդգրկված են ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում:

դ) Համաձայն <<Ավելացված Արժեքի Հարկի Մասին>> ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի սահմանման՝ <<Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է:>>

ԱՅՍԻՆՔՆ՝ ՀՐԱՎԵՐԻ ԹԻՎ 58-ՐԴ ՉԱՓԱԲԱԺՆԻ ՄԱՍՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ <<Ձեռնոց վիրաբուժական ստերիլ 7, 7.5, 8>> ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱՑՆԵԼԻՍ ԻՐԱՎՈՒՆՔ ՉԿԱ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ <<ԱԱՀ>> ՀԱՐԿԱՏԵՍԱԿ ՀԱՇՎԱՐԿԵԼ, ԱՅԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՎԵՐԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ <<ԱԱՀ>>-ի ՀԱՇՎԱՐԿԵԼԸ և ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ՀԱԿԱՍՈՒՄ Է ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ:

Հարգելի գործընկերներ:

Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67 կետի սահմանումների՝ <<Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:>>

Խնդրում ենք ստուգել մեր կողմից ներկայացված վերոգրյալ փաստերի և իրավական ակտերի հավաստիությունը, որոնք հիմք կհանդիսանան Հրավերի թիվ 58-րդ չափաբաժնի մասով <<ՍԴԴ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում Հրավերի թիվ 58-րդ չափաբաժնի մասով պահանջվող <<**Զեռնոց վիրաբուժական ստերիլ 7, 7.5, 8**>> ապրանքների համար առանձնացված տողով ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարի չափի հաշվարկված լինելը որակել որպես իրականությանը չհամապատասխանող, և մերժել <<ՍԴԴ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ Հրավերի թիվ 58-րդ չափաբաժնի մասով:

**Հարգանքով՝**

**<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն** **Սմբատ Բալասանյան**

**17. 02. 2021թ.**

# «ՍԴԴ ԳՐՈՒՊ»

## ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Հայաստան, Երևան,Սմբատ Զորավար 11/1

ՀՎՀՀ՝ 00918262

Էլ. հասցեն sddgroup2000@gmail.com

Հեռ.՝ 041 230 230

"Հրազդանի ԲԿ " ՓԲԸ

"ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/0301'' ծածկագրով մրցույթի

Գնումների հանձնաժողովին

«19» փետրվար, 2021թ.

<<ՍԴԴ Գրուպ>> ՍՊԸ - ն ցանկանում է պարզաբանում ներկայացնել ներկայացված բողոքի հետ կապված :

1. 58-րդ չափաբաժնի համար ներկայացված փաստաթղթերում հայտարարագրման ԱՏԳԱ դասակարգչի կոդը 4015 է, որը 1317-Ն որոշման համարվում է ԱԱՀ-ով հարկվող ապրանք: Քանի որ նշված կոդը բացակայում է տվյալ որոշման մեջ:

   1317-Ն որոշման մեջ կա ցանկ, որից ելնելով ոմանք կարծում են, որ ձեռնոցները կարելի է վաճառել առանց ԱԱՀ-ի. <<31.Տարբեր չափի ռետինե անատոմիական ձեռնոցներ>> և <<32.Տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ>>, որոնք ընդգրկված են ԱԱՀ - ից ազատված ապրանքների ցանկում:

Այս ամենը ներկայացնելուց զատ, ևս մեկ անգամ նշում ենք, որ չնայած այն փաստի, որ մեր ընկերությունը բողոքարկմանը ներկայացված ապրանքատեսակները չի ստացել այնպիսի կոդերով, որոնք ազատված են ԱԱՀ-ից, այնուամենայնիվ, ըստ Կառավարության 1317-Ն որոշման պետությունն արտոնություն է տալիս կազմակերպություններին այդ կոդերով ստացված ապրանքները վաճառել առանց ԱԱՀ- ի, որից բխում է, որ կազնակերպությունն ինքն է որոշում օգտվել այդ արտոնությունից, թե ոչ: ԵՎ ըստ ՀՀ հարկային օրենսգրքի չկա որևէ օրենք, ըստ որի ավել վճարված հարկը համարվում է օրենքի խախտում: Օրենքի խախտում է համարվում պետ. բյուջեին վճարվելիք գումարը թաքցնելը, իսկ այդ դեպքում եթե առաջնորդվեինք բողոքարկման ներկայցման հիմքով, ապա տեղի կունենար օրենքի խախտում, քանի որ մենք տեղյակ չենք, թե ինչպիսի ձեռնոցներ է առաջարկում ձեզ բողոք ներկայացնող ընկերությունը:

«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Մ. Սաֆարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 313

N _____

«_____» _____20 թ.

«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի
ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՏԻԿԻՆ ՆԵԼԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

(հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան,
Մարշալ Բաղրամյան թաղամաս, Պուրակային 32,
հեռ.՝ (0223) 2 34 64, էլ. փոստ՝ hrazdanibk@mail.ru)

Հարգելի տիկին Ավետիսյան

Ձեր թիվ 087 գրությամբ ներկայացված՝ ստերիլ վիաբուժական ձեռնոցների օտարումն ԱԱՀ-ով հարկվող գործարք համարվելու հարցի հետ կապված պարզաբանում ստանալու վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրությամբ պաշտոնական պարզաբանման ենթակա հարցեր չեն ներկայացվել, ինչպես նաև այն, որ ՀՀ հարկային օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ հարկ վճարողների իրազեկման գործառույթը վերապահված է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ գրությունը և դրանով բարձրացված հարցի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը ս.թ. մարտի 18-ի թիվ 02/2-3/3170-2021 գրությամբ ներկայացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հարկ վճարողներին իրազեկման գործառույթի շրջանակներում ընթացք տալու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Կատ.՝ Արմեն Մինասյան
Եկամուտների քաղաքականության և հարկային
վարչարարության մեթոդաբանության բաժին
Հեռ.՝ (011) 800 328/ 055 44 43 03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

«01» 04 2021թ.
No 03/3-8/16054-2021

«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ,ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՊԱՐՈՆ Կ. ԹԱՄԱԶՅԱՆԻՆ

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարություն
ներկայացրած Ձեր 22.02.2021թ. N087 գրության
(ՊԵԿ մուտք՝ 18.03.2021թ. N12790-2021)

Հարգելի տիկին Ավետիսյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի 307-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների իրազեկման աշխատանքների շրջանակներում առավել հաճախ հանդիպող հարցերն ու դրանց վերաբերյալ տրված իրազեկումները (պատասխանները)՝ առանց հարկ վճարողներին վերաբերող տվյալների, տեղադրում է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ հետագայում նույն հարցերով տրվող դիմումների հիման վրա իրազեկումներ կատարելու նպատակով հղում է կատարում պաշտոնական ինտերնետային կայքում տրված համապատասխան իրազեկումներին: Գրությամբ ներկայացված հարցադրման հետ կապված անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքի «Հաճախ հանդիպող հարցերն ու դրանց վերաբերյալ տրված իրազեկումները» բաժնում (https://www.petekamutner.am/FAQNew.aspx) տեղադրված 108-րդ իրազեկմամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

3/27/2021

X

ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ ՎՄԸՎ հարկերի և պարտադիր վճարների
մեթոդաբանության թիվ 1 բաժին, Հեռ.՝ 060-544-781

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«18» դեկտեմբեր 2020թ. N 108

# ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

## ԱԱՀ-ից ազատված գործարքների վերաբերյալ

Հարց

Կազմակերպությունը Ռուսաստանի Դաշնությունից ներմուծել է բժշկական դիմակներ: Արդյո՞ք ՀՀ տարածքում դրանք վաճառելու դեպքում կառաջանա ԱԱՀ-ի վճարման պարտավորություն:

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ է համարվում ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծումը,

- 61-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում, եթե օրենսգրքի 62-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքը, իսկ օրենսգրքի 5-րդ բաժնի համաձայն՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծման դեպքում՝ ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքի և օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի հանրագումարը,

- 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող


0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ապրանքների ներմուծման դեպքում հարկ վճարողը պարտավոր է մինչև ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել նույն մասով սահմանված փաստաթղթերը (ներմուծման հարկային հայտարարագիր, ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին հայտարարություն),

- 78-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները ՀՀ պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքի (29.06.2001թ. ՀՕ-195) 1-ին հոդվածով սահմանված են այն ապրանքատեսակները, որոնց ներմուծումն ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ազատված է ԱԱՀ-ից:

ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում են դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Նույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը: Միաժամանակ, նշված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանված է ՀՀ կառավարության 05.10.2017թ. N1317-Ն որոշմամբ: Այդ որոշման N3 հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ բժշկական նշանակության ապրանքները ախտորոշման, կանխարգելման, բուժման,


0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝

1) դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին,

2) ներառված են նույն հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ գրությամբ նշված դեպքում.

1) ԵՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման մասով ԱԱՀ հաշվարկվում ու վճարվում, ինչպես նաև հարկային մարմին համապատասխան փաստաթղթեր (ներմուծման հարկային հայտարարագիր, ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին հայտարարություն) ներկայացվում են ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ բաժնով սահմանված կարգավորումներին համապատասխան,

2) ԵՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման մասով ԱԱՀ չի հաշվարկվում և չի վճարվում, եթե այդ ապրանքները ներառված են 29.06.2001թ. ՀՕ-195 օրենքով սահմանված ապրանքատեսակների ցանկում, որոնց ներմուծումն ազատված է ԱԱՀ-ից և միաժամանակ, դրանք ներմուծվում են ԱԱՀ վճարող համարվող կազմակերպության կողմից,

3) բժշկական նշանակության ապրանքների օտարման մասով ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված ԱԱՀ-ից ազատման արտոնությունը կիրառվում է այն ապրանքատեսակների մասով, որոնք դասվում են ԵՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին կամ ներառված են ՀՀ կառավարության 05.10.2017թ. N1317-Ն որոշման N3 հավելվածով սահմանված բժշկական նշանակության ապրանքների ցանկում:

Միաժամանակ, հայտնում ենք, որ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքներն ըստ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգչի համապատասխան ծածկագրերի

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

դասակարգումը կատարվում է հիմք ընդունելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 16.07.2012թ. «Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը և Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը հաստատելու մասին» N54 որոշմամբ սահմանված դասակարգման կանոնները: «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի 21-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համապատասխան անձանց դիմումով մաքսային մարմինները կարող են իրականացնել ապրանքների դասակարգում նախքան դրանց մաքսային հայտարարագրումը՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի համաձայն ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումներ ընդունելու միջոցով: ՀՀ ֆինանսների նախարարի 14.04.2015թ. N220-Ն հրամանով հաստատված է ԱՏԳ ԱԱ-ի ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումների ընդունման կարգը և կոնկրետ ապրանքատեսակների դասակարգման համար հարկ վճարողները կարող են առաջնորդվել նշված հրամանով սահմանված ընթացակարգով:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

A Արարատյան մաքսատուն - վարչություն

1 ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ: IM 40 ЭД

05100010/020520/0022558

02.05.20 11:54 474260

3 Ձևեր: 1 | 1

4 Առաք.մասն.: 8/10

5 Ընդ.ապ.: 1

6 Ընդհան. տեղեր: 400

7 Տեղեկատու հավար:

18262

9 Ֆինանսական կարգավորման պատասխանատու No. 00918262
«ՍԴԴ գրուպ» ՍՊԸ
Հայաստան, Երևան, Գալշոյան փող.34/29

29

10 Նշանակ. առ.Վ. ուղ.երկ.

11 Ա/տուր անող: IN | երկ.

12 Ընդհանուր մաքսային արժեք: 10,259,947

14 Հայտարարատու: 00918262
«ՍԴԴ գրուպ» ՍՊԸ
Հայաստան, Երևան, Գալշոյան փող.34/29, 27333

15 Ուղարկող երկիր: Հնդկաստան

15 Ռ.Ե.Ծ.: a IN b

17 Ն.Ե.Ծ.: a AM b

16 Ծագման երկիր: Հնդկաստան

17 Նշանակման երկիր: Հայաստան

18 Տրանսպ. միջ. նույն. և հաշվ. երկիրը մեկնման/ժամանման ժամանակ: 2: OV252VV/MM252N | GE

19 Դրա: 1

20 Առաքման պայմաններ: FOB COCHIN

21 Ակտիվ տրանսպ. միջոցի նույն. և հաշվ. երկիրը սահմանին: 2: OV252VV/MM252N | GE

22 Արժ. և ընդհ. գումարը ըստ հաշվի: USD 19,400

23 Արժ. փոխարժեք: 479.28

24 Գործարքի բնույթ:

25 Փոխիոցի տեսակը: 30 | սահմանին

26 Փոխիոցի տեսակը: 31 | երկրի ներս.

27 Բեռնման/բեռնաթափման վայր:

28 Ֆինանսական և բանկային տվյալներ:

29 Մուտքի / ելքի մարմին: 05100022

30 Ապրանքների վայր: 11,05100010,MHT00036

31 Փաթեթ. և ապր-ների նկարագր.: Պիտան, տեղերի քանակ եւ տեսակ, բեռնարկղի համարներ
1) - - վիրաբուժական , ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՈԵՏԻՆԵ ՁԵՌՆՈՑՆԵՐ ՍՏԵՐԻԼ
2) 400/ 1 CS-400
3) ME 1: TTNU1101312

32 Ապր: 1

33 Ապրանքի ծածկագիր: 40151100000

34 Ծ.Ե.Ծ.: a IN b

35 Բրուտտո քաշ (կգ): 7,164.75

36 Արտոն.: OOTH-00-

37 ԸՆԹԱՑԱԿԱՐԳ: 4000 | 000

38 Նետտո քաշ (կգ): 3,911.35

39 Քվոտա:

40 Ընդհանուր հայտարարագիր / Նախորդող փաստաթուղթ

41 Լրաց. միավոր: 200000/Զույգ715

42 Ապրանքի գին: 19,400

43 ՄԱՍՈԾ: 6 | 0

44 Լրաց. տեղեկ./Ներկայաց. փաստ-եր:
09013/1 05100022/300420/0007908
11003/1 A/H 08/01/2020
11002/1 1 08/01/2020
07011/1 21 16/03/2020

ՏԵՍ ԼՐԱՑ.

45 Մաքսային արժեք: 10,259,947

46 Վիճակագրական արժեք: 21,407

47 Վճարում-ների հաշվարկ

| Տեսակ | Հարկման հիմք | Դրույքաչափ | Գումար | Վճ |
|---|---|---|---|---|
| 1010 | | | 18,200 | ИУ |
| 5010 | 10,259,947 | 20 | 2,051,989 | ИУ |
| 2010 | 10,259,947 | 10 | 1,025,995 | УН |
| 2010 | 0 | 0 | 0 | УМ |
| Ընդամենը: | | | | |

48 Վճարումների հետաձգում:

49 Պահեստի տվյալներ:

Բ. Հաշվարկման մասնակցներ

| Տեսակ | Գումար | Փաստաթղթի հավար | Փաստաթղթի ամսաթիվ | Վճ |
|---|---|---|---|---|

ՀՀ ՊԵԿ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄՍ ՎՃԱՐՎԱԾ Է ՕՊԼԱՏԵՆ

C PAID
ՊԱՇՏՕՆ
ԱՇԽԱՏԱԿԻՑ
«___» _____ 20 թ.

04 MAY 2020

51 Տարանց. առաք. լիազ. (և երկիր)

52 Երաշխիք օրինական չէ

Ծածկագիր

53 Նշանակման երկիր և մաքսային մարմին

D ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ

Ընթացակարգ: Ընտրված է Դեղին ուղի

54 Վայր և ամսաթիվ

Հայտարարատուի ստորագրություն և անուն
ՏԱԹԵՎԻԿ ՇԱՀԲԱԶՅԱՆ
Phone: +37455977276, Email: tatevshahbazyan@mail.ru

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ
ՍՏԱՑՎԱԾ Է
ՏԱՐԱ ՇԱՀԱԲԱԶՅԱՆ
ԱՇԽԱՏԵՑ

04 05 20 698

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

---

ք. Երևան 19.03.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/05**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Գ.Մոսինյանի (լիազորագիր տրված՝ 08.01.2021թ.)

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն

Ս. Բալասանյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 264.110.05665),

«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ

Հ. Դալաքյանի (լիազորագիր տրված՝ 16.01.2019թ.),

Ա. Մնացականյանի (լիազորագիր տրված՝ 02.03.2021թ.),

քննելով «Մարտունու ծննդատուն» ՊՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից 23.02.2021թ. ներկայացված (24.02.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/05 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 23.02.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Մարտունու ծննդատուն» ՊՓԲԸ-ն «Բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2021թ. փետրվարի 1-ի թիվ 2 որոշմամբ, որի Հրավերով պահանջվում են թվով 40 ապրանքներ, որոնցից թիվ 19-րդ չափաբաժնի «Տեխնիկական բնութագիրը» սյունակում գրված է «Ձեռնոց ոչ ստերիլ N 7.5, լատեքսից ....», իսկ թիվ 20-րդ չափաբաժնի «Տեխնիկական բնութագիրը» սյունակում գրված է «Ձեռնոց մանրէազերծ տալկով, N7,5....»:

2021թ. փետրվարի 10-ին կայացած բացման նիստի թիվ 2-րդ արձանագրության թիվ 3-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «....Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխան լինելու մասին», իսկ թիվ 4-րդ կետի աղյուսակով տրված են մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները:

2021թ. փետրվարի 11-ին «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից դիմում է հղվել մրցույթի գնահատող հանձնաժողովին առ այն, որ «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Հրավերի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված «Գնային առաջարկ»-ներում հաշվարկված և ներառված են ԱԱՀ-ի մեծություններ, որոնք չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին, այսինքն՝ հակասում են գործող ՀՀ օրենսդրությանը:

Դիմումով «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ն խնդրել էր մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67 կետի սահմանումներով, ստուգել ներկայացված փաստերի և իրավական ակտերի հավաստիությունը, որոնք հիմք կհանդիսանան Հրավերի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասերով «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «Գնային առաջարկ»-ներում առանձնացված տողով ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարի չափի հաշվարկված

լինելը որակել որպես իրականությանը չհամապատասխանող, և մերժել «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը՝ Հրավերի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասերով:

2021թ. փետրվարի 15-ին կայացած նիստի թիվ 3-րդ արձանագրությունում մրցույթի գնահատող հանձնաժողովը՝ անգործություն դրսևորելով, չի անդրադարձել «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումով բարձրացված հարցերին, և թիվ 2-րդ կետով միանգամից որոշում է կայացրել մրցույթի ընտրված մասնակիցներին ճանաչելու մասին:

«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով «Գնումների մասի» ՀՀ օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Մարտունու ծննդատուն» ՊՓԲԸ-ի «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի անգործությունը՝ «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ի դիմումի հետ կապված, ինչպես նաև «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 2021թ. փետրվարի 10-ի թիվ 2-րդ նիստի արձանագրության թիվ 3-րդ կետով և 2021թ. փետրվարի 15-ի թիվ 3-րդ նիստի արձանագրության թիվ 2-րդ կետով ընդունված որոշումները՝ Հրավերի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասերով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝ ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի «Մարտունու ծննդատուն» ՊՓԲԸ-ի «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ չեղյալ հայտարարելու «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2021թ. փետրվարի 10-ի թիվ 2-րդ նիստի արձանագրության թիվ 3-րդ կետով ընդունված «....Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխան լինելու մասին» որոշումը և 2021թ. փետրվարի 15-ի թիվ 3-րդ նիստի արձանագրության թիվ 2-րդ կետով ընդունված՝ մրցույթի ընտրված մասնակիցներին ճանաչելու մասին, որոշումը՝ Հրավերի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասերով:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

1) Համաձայն «ԳՆումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

«1. Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: .....», որոնցից սույն բողոքին առընչվում են հետևյալ իրավական ակտերը՝

ա) Համաձայն «Ավելացված Արժեքի Հարկի Մասին» ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի սահմանման՝ «Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է»:

բ) Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի՝

ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է,

գ) Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի՝

ԱԱՀ-ից ազատված գործարքներ են համարվում դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը:

Նույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է ՀՀ Կառավարությունը:

դ) Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ԱԱՀ-ից ազատման արտոնությունների կիրառության շրջանակի մեջ են մտնում նաև՝

«3. Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝

2) ներառված են սույն հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում:

ե) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1317-Ն որոշման Հավելված 3-րդին կից «ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ»-ի թիվ 31-րդ և 32-րդ կետերի՝

«31. Տարբեր չափի ռետինե անատոմիական ձեռնոցներ

32. Տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ»,

անվանումներով ապրանքները ընդգրկված են ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում:

«ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 19-րդ չափաբաժնով պահանջվող «Ձեռնոց ոչ ստերիլ N 7.5, լատեքսից ....» և թիվ 20-րդ չափաբաժնով պահանջվող «Ձեռնոց մանրէազերծ տալկով, N7,5....» ապրանքները հանդիսանում են բնական հումքից՝ կաուչուկի լատեքսից, պատրաստված ռետինե ձեռնոցներ, որոնցից ստերիլները կիրառվում են վիրաբուժական միջամտությունների (վիրահատություններ) ժամանակ, իսկ ոչ ստերիլները կիրառվում են ոչ վիրաբուժական միջամտությունների (անատոմիական, ատամնաբուժական, գինեկոլոգիական և այլն) ժամանակ:

Այսինքն՝ Հրավերի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները ընդգրկված են ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում, այդ ապրանքները ՀՀ տարածքում իրացնելիս իրավունք չկա դրանց համար «ԱԱՀ» հարկատեսակ հաշվարկել:

Հրավերի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասերով առաջարկներ կան նաև մրցույթի այլ մասնակիցների կողմից ևս, որոնք սակայն իրենց գնային առաջարկներում չեն հաշվարկել ԱԱՀ-ի մեծությունները և չեն ներառել դրանք ապրանքի գնի մեջ՝ պահպանելով ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջները:

Վերոգրյալ փաստացի և իրավական հիմքերն ու ապացույցները աներկբա կերպով ապացուցում են, որ «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի մասնակից «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Գնային առաջարկ»-ում Հրավերի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ԱԱՀ-ի հաշվարկելը և ներկայացնելը չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին, այսինքն՝ հակասում են գործող ՀՀ Օրենսդրությանը:

2) Հրավերի թիվ 19 և 20-րդ չափաբաժինների մասերով գնահատող հանձնաժողովի անգործությունը՝

Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67-րդ կետի՝ «Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է»:

«ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը անգործություն դրսևորելով՝ չի անդրադարձել «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումին, չի իրականացրել օրենսդրությամբ իրեն ընձեռնված՝ մասնակիցների ներկայացրած տվյալների ստուգմանը ուղղված հնարավորությունը, որի արդյունքում «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Հրավերի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված «Գնային առաջարկ»-ում հաշվարկված և ներառված ԱԱՀ-ի մեծությունները՝ որոնք չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին, պետք է որակվեին որպես իրականությանը չհամապատասխանող, իսկ այդ մասնակցի հայտը մերժվեր տվյալ չափաբաժինների մասով»:

Ի լրումն բողոքի Ընկերությունը 04.03.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն ԳԲՔԱ-ՆԳ-2021/05 բողոքի Ձեզ եմ ներկայացնում մեր կողմից ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերի, ապացույցների, էլեկտրոնային տարբերակով «Վիկիպեդիա» հանրագիտարանից երկու հոդված, որոնցում հիմնավորվում է, որ կաուչուկը ռեզին է, իսկ նիտրիլը արհեստական կաուչուկ է:

Ի լրումն բողոքի ներկայացված այս իրավական փաստաթուղթը լրացուցիչ կերպով հաստատում է մեր բողոքի հիմնավոր լինելը, ուստի «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ն պնդում է իր բողոքի պահանջը»:

Ընկերությունը ներկայացված բողոքի քննության շրջանակներում ներկայացրել է նաև ՀՀ ֆինանսների նախարարության գրությունը՝ ուղղված «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ին, պատճենը՝ ՀՀ Շիրակի մարզպետարանին, հետևյալ բովանդակությամբ.

«Ուսումնասիրելով հիշյալ գրությունները, այդ թվում՝ «Լեյկո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված՝ պետական գնումների շրջանակներում ներկայացվող գնային առաջարկում ԱԱՀ-ից ազատված գործարքների մասով ԱԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվություն ներառելու հետ կապված դիտարկումները՝ հայտնում ենք հետևյալը.

Պետական գնումների շրջանակներում Ընկերության կողմից որոշ ապրանքների օտարումն ԱԱՀ-ից ազատված լինելու հետ կապված դիտարկումների վերաբերյալ.

Ընկերությունը նշում է, որ վերջինիս կողմից օտարվող որոշ ապրանքների ԱՏԳ ծածկագրերը տարբերվում են ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված թիվ 3 հավելվածում նշված ԱՏԳ ԱԱ ծածկագրերից: Բացի այդ, նշվում է, որ ընկերության կողմից օտարվող ձեռնոցները չեն հանդիսանում նշյալ հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում ներառված՝ անատոմիական և վիրաբուժական ձեռնոցներ:

Վերոգրյալի կապակցությամբ, հայտնում ենք, որ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝ 64-րդ հոդվածի՝

1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է,

2-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատված գործարքներ են համարվում դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Նույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ բժշկական նշանակության ապրանքները

ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝

1) դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 11, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին.

2) ներառված են նույն հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում: Մասնավորապես՝ նույն ցանկի 31-րդ և 32-րդ կետերի համաձայն՝ բժշկական նշանակության ապրանքների թվին են դասվում տարբեր չափի ռետինե անատոմիական և վիրաբուժական ձեռնոցները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ գործող հարկային օրենսդրության համաձայն՝ ԱԱՀ-ից ազատված է համարվում ոչ միայն արտաքին տնտեսական գործունեունեթյան ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21 և 5601 22 ծածկագրերի դասվող ապրանքների օտարումը, այլ նաև այն ապրանքների (տարբեր չափի ռետինե և վիրաբուժական ձեռնոցներ) օտարումը, որոնք ներառված են վերոնշյալ ցանկում: Հետևաբար, այն հանգամանքը, որ, խնդրո առարկա ապրանքներն Ընկերության կողմից հայտարարագրվել են ԱՏԳ ԱԱ այլ ծածկագրերով, դեռևս չի նշանակում, որ այդ օտարումն ազատված չէ ԱԱՀ-ից:

Տեղեկացնում ենք նաև, որ Օրենսգրքի.

- 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի համար պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված՝ Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների և Օրենսգրքի 71-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվանցվող (պակասեցվող) ԱԱՀ-ի գումարների (եթե Օրենսգրքի 72-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ) դրական տարբերությունը,

-71-րդ հոդվածով սահմանված են ԱԱՀ-ի հաշվանցումների (պակասեցումների) իրականացման կարգը,

-72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 70-րդ և 74-րդ հոդվածներով սահմանված կարգով բյուջե վճարման ենթակա կամ բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվարկման նպատակով ԱԱՀ-ի

հաշվանցումներ (պակասեցումներ) չեն կատարում, եթե ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները վերագրվում են ԱԱՀ-ից ազատված գործարքներին, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 19-րդ և 31-րդ կետերով սահմանված դեպքերի, երբ ԱԱՀ-ի հաշվանցումները (պակասեցումները) կատարվում են Օրենսգրքով սահմանված կարգով՝ անկախ ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները ԱԱՀ-ից ազատված գործարքներին վերագրվելու հանգամանքից:

Հետևաբար, հայտնում ենք, որ ԱԱՀ-ից ազատված գործարքների մասով ԱԱՀ վճարող տնտեսավարող սուբյեկտները չեն կարողանալու հաշվանցել ներմուծման փուլում կամ մատակարարներին վճարված ԱԱՀ-ի գումարները, ինչը նշանակում է, որ գործնականում այդ գումարները դառնում են ապրանքների ինքնարժեքի տարր և ներառվում ապրանքների գնի մեջ:

Ինչ վերաբերում է ընկերության կողմից օտարվող ձեռնոցները որպես անատոմիական կամ վիրաբուժական ձեռնոցներ որակելուն, ապա հայտնում ենք, որ այդ հայցի քննարկումը դուրս է ՀՀ ֆինանսների նախարարության իրավասությունների շրջանակից:

Ընկերության կողմից ներկայացված հարկային արտոնություններից օգտվելու հետ կապված դիտարկման վերաբերյալ.

Օրենսգրքի՝

-4-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ հարկային արտոնությունը Օրենսգրքով սահմանված հարկերի, Օրենսգրքով սահմանված վճարների, տույժերի և (կամ) տուգանքների հաշվարկման ու վճարման ընդհանուր կարգից և (կամ) ժամկետներից բացառություն է, որի արդյունքում չի առաջանում հարկային պարտավորություն կամ նվազում, կամ վերանում է կատարման ենթակա հարկային պարտավորության գումարը, կամ հետաձգվում են դրա հաշվարկման և (կամ) կատարման ժամկետները,

-19-րդ հոդվածի՝

ա. 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հարկից ազատումը համարվում է հարկային արտոնություն,

բ. 4-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը կարող է հարկային մարմին ներկայացնել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն և հրաժարվել հարկային արտոնությունից օգտվելու իրավունքից, բացառությամբ նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի: Նույն մասով սահմանված հայտարարության ներկայացման դեպքում՝

հարկային արտոնությունը դադարում է գործել հայտարարության ներկայացման օրվանից հետո ձևավորվող հարկման օբյեկտների մասով,

հայտարարության ներկայացման օրվանից հետո իրականացվող գործարքները, գործառնությունները Օրենսգրքի կիրառության իմաստով համարվում են հարկվող գործարքներ, գործառնություններ,

հարկ վճարողը մինչև հայտարարության ներկայացման օրն ընդգրկող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը չի կարող հրաժարվել հարկային արտոնությունից չօգտվելու վերաբերյալ հայտարարությունից, հարկ վճարողի կողմից չօգտագործված հարկային արտոնությունը ենթակա փոխանցման հաջորդ հաշվետու ժամանակաշրջաններ՝ ապագա հարկային պարտավորությունների նվազեցման նպատակով, հարկային արտոնությունից չօգտվելը հարկ վճարողին չի ազատում հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու դեպքում նրա նկատմամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ եթե տնտեսավարող սուբյեկտները ցանկանում են չօգտվել Օրենսգրքով սահմանված հարկային արտոնություններից, ապա պետք է հարկային մարմին ներկայացնեն հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ հարկային արտոնությունից օգտվելու իրավունքից հրաժարման վերաբերյալ, այլապես Օրենսգրքով սահմանված հարկային արտոնությունները կիրառելի են օրենքի ուժով:

Տեղեկացնում ենք նաև, որ հայտերի գնահատման իրավասությունը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ վերապահված է գնահատող հանձնաժողովին»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.03.2021թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

**2. <u>«Մարտունու ծննդատուն» ՊՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>**

«Մարտունու ծննդատուն» ՊՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 02.03.2021թ. թիվ 24 գրությամբ հայտնել է հետևյալը.

«02.02.2021թ. «Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ-ն բժշկական նշանակության պարագաների ձեռք բերման նպատակով գնանշման հարցման «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի հրավեր է հայտարարել՝ հիմք գնահատող հանձնաժողովի թիվ 2-րդ որոշումը՝ ներկայացնելով թվով 40 ապրանքանիշ:

«Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ-ն 10.02.2021թ. թիվ 2 արձանագրությամբ հայտարարել է բանակցություն մինչ 12.02.2021թ.-ի 11:00-ն, իսկ 11.02.2021թ.-ին «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ն դիմում է ներկայացրել «Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ-ին, հայտնելով, որ «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ն հրավերի 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով թույլ է տվել օրենքի խախտում՝ նշված չափաբաժինների մեջ ներառվել է ԱԱՀ, որը հակասում է ՀՀ գնումների օրենսդրությանը:

Պարզաբանում. «Քանի որ տվյալ ապրանքանիշը ՀՀ օրենսդրությամբ ազատված է ԱԱՀ-ից, իսկ մրցակիցը տվյալ դեպքում «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ն, մեր կողմից հայտարարված մրցույթին ներկայացված 19-րդ և 20-րդ չափաբաժինների համար գին է ներկայացրել ԱԱՀ-ն առանձին, ինքնարժեքն առանձին, մենք «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքելու ենք պայմանագիր առանց ԱԱՀ-ի միայն 20-րդ չափաբաժնի մասով, քանի որ տեղի ունեցած բանակցության արդյունքում Ռիտա Գասպարյան Ա/Ձ-ն 19-րդ չափաբաժնի համար ներկայացրել է նվազագույն նոր գնային առաջակ այդ չափաբաժնի մասով և ճանաչվել է ընտրված մասնակից, այդ իսկ պատճառով մենք չենք անդրադարձել «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ի դիմումին»:

Հաշվի առնելով որ «Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ-ի «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի շրջանակում կիրառված անգործության ժամկետը 20.02.2021 թվականի ավարտվել է և գտնվում ենք պայմանագրի կնքման փուլում, իսկ ձեռք բերվող ապրանքները շտապ կարգով են անհրաժեշտ, ուստի խնդրում ենք դիտարկել հնարավորությունը մյուս չափաբաժինների մասով որոնք չեն գտնվում բողոքարկման առարկայի շրջանակում «Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ-ին թույլատրել շարունակել գնման գործընթացը»:

Պատվիրատուն նաև ԳԲՔԱ-ՆԳ-2021/05 բողոքի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.03.2021թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 26.02.2021թ. ԳԲՔԱ-ՆԳ-2021/05 բողոքի շրջանակներում ներկայացվել է գրավոր միջնորդություն, Ընկերությանը որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ, որը բողոքի քննության նպատակով 02.03.2021թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բավարարվել է:

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը ԳԲՔԱ-ՆԳ-2021/05 բողոքի քննության նպատակով 02.03.2021թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստին ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է, որ բողոքով բարձրացված խնդիրը վերաբերում է վիճարկվող չափաբաժիններով նախատեսված ապրանքները գնային առաջարկում առանձին տողով ԱԱՀ հաշվարկելուն և նախատեսելուն, որի հետ կապված խնդիրը «Խաչպար» ՍՊԸ-ն ևս բարձրաձայնել է բազմիցս ներկայացված բողոքներով:

«Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է նաև, որ ներմուծման ժամանակ «Խաչպար» ՍՊԸ-ն ևս ստերիլ և ոչ ստերիլ ձեռնոցների ներմուծման ժամանակ հարկվել է ԱԱՀ-ով, սակայն խնդիրը վերաբերում է երկրի ներսում նշված ապրանքների օտարմանը, որոնց դեպքում գործում է ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» N 1317-Ն որոշման պահանջները:

«Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ վերը նշված որոշման Հավելված 3-ին կից «Բժշկական նշանակության ապրանքների ցանկ»-ի թիվ 31-րդ և 32-րդ կետերով սահմանված են՝

31. Տարբեր չափի ռետինե անատոմիական ձեռնոցներ

32.Տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ, որոնց օտարումը արգելվում է ԱԱՀ-ով կատարել, մինչդեռ «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկում առանձին տողով նախատեսվել է ԱԱՀ:

Իսկ այն բժշկական նշանակության ապրանքները, որոնք ներառված չեն վերը նշված ցանկում, դրանց համար ընկերությունները պարտավոր են վճարել և գնային առաջարկում նախատեսել ԱԱՀ:

«Խաչպար» ՍՊԸ-ն վկայակոչել է նաև բողոքով վիճարկվող հարցի շուրջ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումը, որը բողոքաբերի կողմից բողոքի քննության շրջանակներում ներկայացվել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

**<u>4. «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ԳԲՔԱ-ՆԳ-2021/05 բողոքի շրջանակներում ներկայացվել է գրավոր միջնորդություն, Ընկերությանը որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ, որը բողոքի քննության նպատակով 02.03.2021թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բավարարվել է:

«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները ԳԲՔԱ-ՆԳ-2021/05 բողոքի քննության նպատակով 02.03.2021թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստին ապահովել են իրենց մասնակցությունը, ովքեր մասնավորապես հայտնել են հետևյալը.

«Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ 12-րդ կետով սահմանվել է, որ մասնավորապես, բժշկական նշանակության ապրանքների օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից: Նույն կետով սահմանվել է, որ բժշկական նշանակության ապրանքների արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը: Այնուհետև, ՀՀ կառավարության կողմից 04.10.2017թ. ընդունված

թիվ 1317-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) սահմանվել է կիրառման շրջանակները, որի թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, ԱԱՀ-ից ազատվում են նույն հավելվածի ցանկում արտացոլված ապրանքների օտարման գործարքները: Մասնավորապես, ձեռնոցների գծով կիրառվում է ԱԱՀ-ից ազատման արտոնություն, եթե օտարվում են

Ցանկի 31-րդ կետ - Տարբեր չափի ռետինե անատոմիական ձեռնոցներ

Ցանկի 32-րդ կետ - Տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ:

«Վարչարարաության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված է, որ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ակնհայտ է, որ որպեսզի ձեռնոցների օտարման գործարքները որակվեն որպես ԱԱՀ-ից ազատված գործարքներ, ապա պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին՝

ա) երկու դեպքում էլ պետք է լինեն ռետինե,

բ) ցանկի 31-րդ կետով սահմանված դեպքում պետք է լինեն անատոմիական

գ) ցանկի 32-րդ կետով սահմանված դեպքում պետք է լինեն վիրաբուժական:

«ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ն, հանդիսանալով պարտաճանաչ հարկ վճարող, որպես ԱԱՀ վճարող համարվող կազմակերպություն իր ապրանքների օտարման գործարքները համարել է որպես ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքներ, և դրա արդյունքում գոյացած ԱԱՀ-ի պարտավորության գումարները փոխանցել է ՀՀ պետական բյուջե: Այլ կերպ ասած, պետական բյուջեից ֆինանսավորվող գծով առանձնացված ԱԱՀ-ի գումարներն ըստ էության ետ է վճարել ՀՀ պետական բյուջե՝ ԱԱՀ-ի տեսքով:

Ակնհայտ է, որ այն ձեռնոցները, որոնք չեն ներառվում ցանկի 32-րդ կետում (չեն համարվում ռետինե վիրաբուժական ձեռնոցներ), պետք է լինեն ռեիտնե անատոմիական ձեռնոցներ: Հետևաբար, մեր դիրքորոշմամբ, որպեսզի մատակարարված ձեռնոցներն որակվեն որպես բժշկական նշանակության ապրանքներ, առնվազն պետք է ունենան անատոմիական կառուցվածք: Իսկ ձեռնոցների, անատոմիական կառուցվածք ունենալը ենթադրում է, որ դրանք պետք է ունենան «աջ» և «ձախ» ձեռքերի համար նախատեսված

հստակ տարբերակում, իսկ առաջարկված զննման ձեռնոցները (N19-Ոչ ստերիլ ձեռնոցները) չունեն նման հստակ տարբերակում:

Հետևաբար, առաջարկված ձեռնոցները ենթակա են ԱԱՀ-ով հարկման:

Հաշվի առնելով վերոգրյալը, ՀՀ-ում գործող իրավական ակտերը, մասնավորապես թիվ 1317-Ն որոշման, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթները, խնդրում եմ չմերժել առաջարկած տարբերակով ձեռնոցների մատակարարման իրավունքը:

Միաժամանակ տեղեկացնում ենք Ձեզ, թիվ 1317-Ն որոշման 3-րդ հավելվածում արտացոլված ցանկի 32-րդ կետի վերաբերյալ առկա անորոշությունների պարզաբանման համար Ընկերությունը պատրաստվում է առաջիկայում դիմել պետական լիազոր մարմիններին»:

**5. ԳԲՔԱ-ՆԳ-2021/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲՔԱ-ՆԳ-2021/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Մարտունու ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:
2. «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել Ընթացակարգի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով:
3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, Ընթացակարգի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով, հայտեր են ներկայացրել «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ն, «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և Ռիտա Գասպարյան Ա/Ձ-ն:
4. «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից, բողոքով վիճարկվող չափաբաժինների մասով, հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրած գնային առաջարկներում նախատեսվել է ԱԱՀ:
5. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով Ընթացակարգի 19-րդ և 20-րդ

չափաբաժիններով նախատեսված ապրանքների ձեռբերման համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | անվանումը | տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|
| 19 | Ձեռնոց ոչ սերիլ | Ձեռնոց ոչ ստերիլ N 7.5, լատեքսից, առանց տալկի: |
| 20 | Ձեռնոց մանրէազերծ N7,5 | Ձեռնոց մանրէազերծ տալկով, N7,5 քաշը ոչ պակաս 9գ-ից, երկարությունը ոչ պակաս 28սմ-ից: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: |

6. «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը Ընթացակարգի 19-րդ և 20-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար ներկայացվել է հետևյալ ձևով.

| չափաբաժնի համարը | տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 19 | Ձեռնոց ոչ ստերիլ N 7.5, լատեքսից, առանց տալկի: |
| 20 | Ձեռնոց մանրէազերծ տալկով, N7,5 քաշը ոչ պակաս 9գ-ից, երկարությունը ոչ պակաս 28սմ-ից: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: |

7. Ռիտա Գասպարյան Ա/Ձ-ի կողմից Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը Ընթացակարգի 19-րդ և 20-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար ներկայացվել է հետևյալ ձևով.

| չափաբաժնի համարը | տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 19 | Ձեռնոց ոչ ստերիլ N 7.5, լատեքսից, առանց տալկի: |
| 20 | Ձեռնոց մանրէազերծ տալկով, N7,5 քաշը ոչ պակաս 9գ-ից, երկարությունը ոչ պակաս 28սմ-ից: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: |

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 19-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչել Ռիտա Գասպարյան Ա/Ձ-ին, իսկ 20-րդ չափաբաժնի մասով՝ «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

**6. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ի 23.02.2021թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով և լրացմամբ, գործի քննության ընթացքում «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումները, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: ***Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում

առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Այսպես՝ «Մարտունու ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել Ընթացակարգի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, Ընթացակարգի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով, հայտեր են ներկայացրել «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ն, «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և Ռիտա Գասպարյան Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. «Հաշվի առնելով, որ Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ 2021թ. փետրվարի 12-ին ժամը 11:00-ին՝ հրավերով պահանջված փաստաթղթերի առկայությունը բավարար գնահատված մասնակիցները, հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների: Նվազեցված գնային առաջարկները կարող են ուղարկվել sirarpih@mail.ru էլ. հասցեին 12.02.2021թ. մինչև 11:00-ն: Բանակցությունների ժամկետ է սահմանվում 15 րոպե:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ, ամփոփելով 12.02.2021թ.-ին Ընթացակարգի շրջանակներում կազմակերպված բանակցությունների արդյունքները, Ընթացակարգի 19-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչել Ռիտա Գասպարյան Ա/Ձ-ին, իսկ 20-րդ չափաբաժնի մասով՝ «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ն ԳԲՔԱ-ՆԳ-2021/05 բողոքով հայտնել է, որ «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի մասնակից «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում Ընթացակարգի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ԱԱՀ-ի հաշվարկելը և ներկայացնելը չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին, այսինքն՝ հակասում են գործող ՀՀ օրենսդրությանը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից, Ընթացակարգի 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով, հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրած գնային առաջարկներում նախատեսվել է ԱԱՀ:

Եվ այսպես, ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:

Նույն հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատված գործարքներ են համարվում դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական

նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Նույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ բժշկական նշանակության ապրանքները ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝

1) դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին.

2) ներառված են նույն հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում (հետայսու՝ Ցանկ):

***Մասնավորապես՝ Ցանկի 31-րդ և 32-րդ կետերի համաձայն՝ բժշկական նշանակության ապրանքների թվին են դասվում <u>տարբեր չափի ռետինե անատոմիական և վիրաբուժական ձեռնոցները:</u>***

***<u>Այսպիսով՝ վերը նշված կարգավորումների համաձայն՝ ԱԱՀ-ից ազատված է համարվում ոչ միայն արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21 և 5601 22 ծածկագրերի դասվող ապրանքների օտարումը, այլ նաև այն բժշկական նշանակության ապրանքների օտարումը, որոնք ներառված են Ցանկում:</u>***

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 2718-Ա հրամանով հաստատվել է «Ձեռնոցները որպես բժշկական միջամտությունների անվտանգության ապահովման միջոց» մեթոդական ուղեցույցը, որի 6-րդ բաժնի 13-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝

***1. <u>Ձեռնոցները դասակարգվում են.</u>***

1) ըստ պատրաստման նյութի

ա. լատեքսային

բ. նիտրիլային

գ.նեոպրենային

դ.վինիլային

ե. պոլիէթիլային և այլն

***2. <u>Ըստ նշանակության և կիրառման ոլորտների</u>***

***<u>ա.վիրաբուժական</u>***

բ.միանվագ

գ.տեխնիկական կամ կենցաղային

**<u>3. Ըստ ձևի</u>**

**<u>ա.անատոմիական-տարբերակված աջ և ձախ ձեռքի համար</u>**

բ.ունիվերսալ-միանման՝ երկու ձեռքերի համար:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ մասնավորապես, ***<u>նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:</u>***

Այսպիսով՝ ելնելով վերը նշված կարգավորումներից, հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով Ընթացակարգի 19-րդ և 20-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների ձեռբերման համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | անվանումը | տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|
| 19 | Ձեռնոց ոչ սերիլ | Ձեռնոց ոչ ստերիլ N 7.5, լատեքսից, առանց տալկի: |
| 20 | Ձեռնոց մանրէազերծ N7,5 | Ձեռնոց մանրէազերծ տալկով, N7,5 քաշը ոչ պակաս 9գ-ից, երկարությունը ոչ պակաս 28սմ-ից: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: |

«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը Ընթացակարգի 19-րդ և 20-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար ներկայացվել է հետևյալ ձևով.

| չափաբաժնի համարը | տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 19 | Ձեռնոց ոչ ստերիլ N 7.5, լատեքսից, առանց տալկի: |
| 20 | Ձեռնոց մանրէազերծ տալկով, N7,5 քաշը ոչ պակաս 9գ-ից, երկարությունը ոչ պակաս 28սմ-ից: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: |

Ռիտա Գասպարյան Ա/Ձ-ի կողմից Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը Ընթացակարգի 19-րդ և 20-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար ներկայացվել է հետևյալ ձևով.

| չափաբաժնի համարը | տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 19 | Ձեռնոց ոչ ստերիլ N 7.5, լատեքսից, առանց տալկի: |
| 20 | Ձեռնոց մանրէազերծ տալկով, N7,5 քաշը ոչ պակաս 9գ-ից, երկարությունը ոչ պակաս 28սմ-ից: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: |

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ 19-րդ և 20-րդ չափաբաժիններով սահմանված գնման առարկաների, այն է՝ «Ձեռնոցներ ոչ ստերիլ» և «Ձեռնոցներ մանրէազերծված» տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև նշված չափաբաժիններով «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, Ռիտա Գասպարյան Ա/Ձ-ի և «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, արձանագրում եմ, որ երկու դեպքում էլ չի սահմանվել ձեռնոցների ըստ նշանակության և կիրառման ոլորտների, ինչպես նաև ըստ ձևի վերաբերյալ տեղեկատվություն, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը չի կարող որակել, որից ելնելով նաև արձանագրել, որ Ընթացակարգի հրավերով և միաժամանակ

մասնակիցների կողմից թիվ 1.1 Հավելվածով առաջարկվող ձեռնոցները հանդիսանում են Ցանկի 31-րդ և 32-րդ կետերում ներառված՝ տարբեր չափի ռետինե անատոմիական և վիրաբուժական ձեռնոցներ:

Նման պայմաններում գտնում եմ, որ «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկում ԱԱՀ նախատեսելը չի կարող համարվել ոչ իրավաչափ:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Ընկերության բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից 23.02.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**